

ցեաց Շմաւոն եւ Առաւան, ի տոհմէն առաջին Առաւելէնից Փափակ եւ Վարազդէն եւ Դատ¹, ի տոհմէն Արծրունեաց Ապրսամ, ի տոհմէն Մանդակունեաց Սահակ եւ Փարսման, ի տոհմէն Տաշրացեաց Վրէն, ի տոհմէն Ռոփսէնից Բաբիկ² եւ Յոհան³.- եւ զսոսա երեսուն եւ մի այր ի նախարարացն Հայոց՝ հրաման տայր թագաւորն Յազկերտ խիստ կապանաւք պահել անդէն ի Վրկանի⁴, մինչեւ յամս վեշտասաներորդ թագաւորութեանն իւրոյ:

ԽԸ. Եւ յամի վեշտասաներորդի թագաւորութեանն իւրոյ Յազկերտ չու արարեալ ամենայն բազմութեամբ իւրով խաղայր ի պատերազմ ի վերայ Զուշանաց. հրամայէր եւ զկապեալսն Հայոց, զքահանայսն եւ զնախարարսն խաղացուցանել ընդ իւր ի Վրկանէ: 2 Եւ ելեալ յԱպար աշխարհ, եւ եկեալ ի շահաստանն որ անուանեալ կոչի Նիւշապուհ՝ հրամայէր պահել անդ զկապեալսն Հայոց, զքահանայսն եւ զնախարարսն, ի դղեակ⁵ շահաստանին Նիւշապուհ: 3 Բայց զերանելի զերկու քահանայսն, զտէր Սամուէլ եւ զԱբրահամ⁶, հրամայէր ընդ իւր խաղացուցանել. զոր չարաչար վշտով եւ բուռն կապանաւք եւ գանիւ տայր նեղել հասնապազաւր, ահ եւ երկիւղ արկանել ի վերայ քրիստոնէիցն, որք ընդ նմա ի կարաւանին էին: 4 Եւ հասեալ ի սահմանս թշնամեացն՝ եւ ոչ սակաւ մի մասամբք կատարէին խնդիրք թագաւորին, այլ ամենայնիւ⁷ նկուն եղեալ դառնայր ամաւթալից, կորուսեալ ի զաւրաց իւրոց արս ընտիրս եւ ականաւորս, նոյնպէս եւ յայլ ռամիկ այրուծիոյ: 5 Զանգի ոչ դէմ յանդիման ճակատեալ թշնամեացն պատերազմէին⁸ ընդ զաւրսն Պարսից, այլ յեղակարծումն անկեալք ի վերայ միոյ միոյ թելի՝ հանէին ընդ սուր զբազումս, եւ ինքեանք դարձեալ անվնասք աներեւոյթք լինէին: 6 Եւ այսպէս ի բազում աւուրս արարեալ՝ վատնէին⁹ սաստիկ հարուածովք զզաւրսն Պարսից:

7 Եւ թագաւորին Յազկերտի տեսեալ զայնպիսի թերեւութիւն ծանակաւսաց իւրոց, յանհնարին տրտմութիւնս ընկղմեալ մաշէր. մտայոյզ եղեալ խնդրէր գիտել, թէ վասն որո՞յ պատճառանաց եղել դիպեալ նմա այնպիսի ծանր թերեւութիւն: 8 Եւ կացեալ ի տարակուսի՝ ձգէր զպատճառն մերթ յանմիաբանութիւն գնդին իւրոյ եւ մերթ ի մոգուցն ծուլութիւն, թէ «Ուրեմն

1 Ձ. եւ վարազ դէնդադ. Ատ. վարազդէն եւ դադ. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

2 Ձ. բարիկ

3 Ատ. յոհան

4 Ձ. ի վրանի

5 Ձ. ի դղեկ

6 Ատ. զապրահամ

7 Կամ ըստ Ձ. յամենայնի

8 Ձ. պատերազմին

9 Ձ. քնազրում վատնէին (տն-ի վրայ ջնջման նշաններով). լուսանցքում ուղղաժ՝ ըն (ը-ի վրայ ջնջման նշանով). =վանէին